Անի Բադալյան

Ծննդյան թիվն ու վայրը.

1991թ. մարտի 20-ին, Հայաստանի Հանրապետություն (ք. Երևան):

Կրթություն.

2007-2011թթ.	Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, բակալավրի աստիճան՝ «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ (գերազանցության դիպլոմ, 2009-2011թթ.՝ Ջոն Կիրակոսյանի անվանական՝ գերազանցության կրթաթոշակ)
2011-2013թթ.	Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և իրավագիտության ֆակուլտետների համատեղ ծրագրով մագիստրոսի աստիճան՝ «Միջազգային հարաբերություններ, միջազգային իրավունք» որակավորմամբ (գերազանցության դիպլոմ)
2013-2017թթ.	Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրա՝ «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ

Աշխատանքային գործունեություն.

2012-2014թթ.	Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ
2014-2018թթ.	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային իրավունքի և պայմանագրերի վարչության կցորդ, ապա՝ երրորդ քարտուղար
2017-2019թթ.	Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնում դասախոս՝ համատեղության կարգով
2019թ. հունվար – մայիս	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Եվրասիական տարածաշրջանի վարչության երրորդ քարտուղար

2019թ. մայիս – 2022թ. դեկտեմբեր	Եվրոպական միությունում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության երրորդ, ապա՝ երկրորդ քարտուղար
2023թ. հունվար – մարտ	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության ԵՄ բաժնի պետի պաշտոնակատար

<u>Վերապատրաստում և դասընթացներ.</u>

2013թ. մարտ	«Ֆիլիպ Ջեսափ» միջազգային իրավունքի մրցույթ-դատախաղ (Վաշինգտոն)
2013-2014թթ.	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցի դիվանագիտական կադրերի պատրաստման դասընթաց (Երևան)
2014թ. օգոստոս	Տորոնտոյի համալսարանի՝ «Ցեղասպանություն և մարդու իրավունքներ» համալսարանական ծրագիր (Տորոնտո)
2014թ. դեկտեմբեր	ՄԱԿ վերապատրաստման և հետազոտությունների ինստիտուտի (UNITAR) և Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (ՄԳԻՄՕ) կողմից կազմակերպված՝ «Առևտրի համաշխարհային կազմակերպությունը և առևտրային ռեժիմները. Միջազգային իրավական հարցեր» դասընթաց (Մոսկվա)
2017թ. փետրվար-մարտ	Անվտանգային քաղաքականության Ժնևի կենտրոնի (GCSP) «Եվրոպական անվտանգություն» դասընթաց (Ժնև)
2017թ. նոյեմբեր	Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից կազմակերպված՝ Միջազգային մարդասիրական իրավունքի 6-րդ տարածաշրջանային սեմինար (Մինսկ)
2018թ. մարտ	Անվտանգային քաղաքականության Ժնևի կենտրոնում (GCSP) միջազգային մարդասիրական իրավունքի և ճգնաժամերի կառավարման վերաբերյալ դասընթացներ (Ժնև)
2019թ. մարտ	Եվրոպական անվտանգության և պաշտպանության քոլեջի՝ «Ընդհանուր անվտանգային ու պաշտպանական քաղաքականություն» դասընթաց (Բրյուսել)
2020թ. նոյեմբեր	Բելգիայի «Էգմոն» (Egmont) միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի՝ Բելգիայում հավատարմագրված դիվանագետների համար դասընթաց (Բրյուսել)

2023թ. մարտի 10-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրամանով նշանակվել է ԱԳՆ մամուլի քարտուղար:

Օտար լեզուների իմացություն.

Անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն

Ընտանեկան կարգավիճակ.

Ամուսնացած չէ: